Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ö hL
1916
N 2
Fmtns

ԳԻՆՆ Է

ԾԻԼ

15 ԿՈՊ.

(Отпрыскъ)

Баку, Романов. № 29
Арзуманянцу для
„ЦИЛЪ“

Baku, Romanovski st.
29 Arzumanjanc, por.
«Tzil»

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

№ 2 1916 թ. № 2

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ԾԻԼ» ալմանախը առայժմ լոյս է տեսնում անկախ բաժանորդագրական պայմաններից։

Մեր գործակալներին խնդրում ենք նախորդ գրքից մնացած հաշիւները վերջացնել։

«ԾԻԼ»-ի № 2-ը կարելի է ստանալ խմբագրատնից և Սև-քաղաք «Արամազդ» ընկ. գործարան, Արտաշէս Գաբրիէլեանից

Խմբագրութեան մէջ ծախւում են՝ 1) «ԾԻԼ» I գրքոյկ գինը 15 կոպ. II-րդ գրքի հետ միասին՝ 20 կոպ., ճանապարհածախսով՝ 25 կոպ.։ 2) «Ճառագայթ» ժողովածու II-րդ գիրք գինը 10 կոպ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) Խմբագրական
2) «Կեանքի մրժունջ.» բանաս. Հ. Ա-եան
3) Նկարը արձ. բան. Արսէն-Երկաթ
4) Հոգին երկ. բան. Ռ. Յովանէ
5) Հոգևարքի երգերից (ծաղկամանը) արձ. Ս. Վտարանդի
6) Բանտում բանաստ. Մանուկ Աբգ.
7) *** բանաստ. . . Արտ. Գաբրիէլեան
8) Կեանքի հէքիաթներ (Մինիատ. Ս. Աստր.) I թարգ. Մ. Տ. Յով.
9) Հայրենի ազբիւրը արձ. բան. Գաբրիէլ Ֆիտունի
10) *** (արձ. բան. Պշիբիշևսկու) թարգմ. Յար. Յարութիւնեան
11) Մի դիտողութ. (ա) . . . . Գրախօս
12) ՄԱԳԻՍ. — Ժիւլ՛ Գաստոն Բուրժա (գիտակ. հետազ. I գլուխ. նախաբ. և ծանօթ.) թարգմ. . Հ. Ա
13) Ստաց. գրքեր
14) Յայտարարութիւններ

Բակու՝ Էլեքտրո-տպարան Երևանցեանի ‖ Баку, Электро-типогафія Эриванцовъ

Баку, Романов. № 29
Арзуманянцу для
„ЦИЛЪ"

ԾԻԼ

Baku, Remanovski st.
29 Arznmanjanc, por.
«Tzil»

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

№ 2 1916 թ. № 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նախ քան մի երկու խօսքով մեր հրատարակութեան վերսկսումը ընդգծելու, պարտք ենք համարում մի քանի խօսք ասել մեր այսքան երկարատև լռութեան համար,—որ «ԾԻԼ»-ի առաջին համարը լոյս տեսնելուց յետոյ խմբագրական-հրատարակչական կազմը մի քանի տարաձայնութիւններ-ի պատճառով քայքայուեց և «ԾԻԼ»-ի հրատարակութիւնը նախաձեռնողները մի նոր ծրագիր և կազմ պատրաստեցին ապահով հրատարակութիւն դարձնելու «ԾԻԼ»-ը։

Եւ ընտրուեց նոր խմբագրական կազմ։

Առաջին համարը, անշուշտ, չի կարելի «յաջող» անուանել։ Այդ պատճառները պարզ են։ Ամեն մի նոր հրատարակութիւն միշտ էլ դժուարութիւններ է ունենում, սկզբում թէ նիւթական և թէ մտաւոր, մանաւանդ, որ մեր նպատակն է նոր-բողբոջ-ուսանողներին երևան հանել մեր թերթի էջերում, եփել, մշակել և մեր ընկերական անկեղծ խորհուրդներով մարզել նրանց և դուրս բերել այդ «ծիլերից» մեծ ծառեր շինել, որ հզօր քամիների հոսանքների տակ նրանք պահեն իրենց գոյութիւնը և իրենց տակ հոսող գետակին, թփերին մի քիչ հով անեն, փաղաքշեն ու... ամեն ինչ պարզ է։ Միւս կողմից մենք սիրով տեղ ենք տալիս երիտասարդ հեղինակներին. և այդ պէտք է գիտակցեն բոլորը, որովհետև այդ նպաստում է անփորձների մարզուելուն։

Անշուշտ, ինչպէս ասացինք, ամեն ինչ իր սկզբնական շրջանում ենթարկուում է շատ խոչնդոտների, իսկ մի քանի ճիգերից յետոյ նա իր ճանապարհն արդէն հարթում է և ընթանում հարթ ուղիով։

Թող մենք էլ այդպէս լինենք։

Մեր սխալները պիտի ներեն և իրենց բարի խորհուրդները տան մեր իրականութեան անուանի քննադատները և ոչ թէ յարձակուեն և ջախջախեն, չորացնեն ծիլը հէնց հողի մէջ։

Ո՞վ չգիտէ, որ մեծ հանճարները, միշտ էլ իրենց աշակերտական աթոռի վրայ սխալներ են գործել և միայն կեանքի բնական ներշնչումների ազդեցութեան տակ ուղի ընտրել իրենց համար և գնացել այդ ուղիով։

Թող մենք էլ այդպէս լինենք։

Ցաւով ենք, որ մեր հանդէսը աւե-

2074 Ար.

լի կճոխացնենք յետագայում և հասարակութեան լայն խաւերի պահանջներին բաւարարութիւն կտանք, բանալով նորանոր ընդարձակ բաժիններ։

«ԿԵՆՔԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ»-ԻՑ

—

Դէպի վառ լոյսը անցած իմ ճամբան
Օ՜, այնպէս խառն է, այնպէս զզուելի.
— Ժպտում ես, ծաղրում ակամայ, այնքան
Ստոր է թւում, խելառ ու անմիտ։

Անցրին այդ ճամբան՝ ոլորուն, տխուր.
Ցանեցի ճամբիս փշոտ ծաղիկներ.
—Օ՜, նրանց փուշեր շատերին անլուր
Ճամբին են թողել, իսկ իրենք անմեռ...

Անցայ այդ ճամբան. տեսայ այն լոյսը.
Տենչացի այնպէս յագուրդ փափաքով.
—Օ՜, դուք երկնային հզօր կարողներ,
Խորհուրդներ կուզեմ անգին յոյսերով։

Լսեցի յանկարծ ձայն մի մօտիկից.
Լռեցի՝ ճնշած բոլորին տեսայ.
Ու այն վճռական ձայնին ունկնդիր
Աղօթքի պատրաստ ես ծունկի իջայ...

«Շատերն են այդպէս տենչացել լոյսին՝
Բոլորը եկել քո եկած ճամբով.
Սակայն բոլորն էլ անցել են անդէն,
Քչերն են ուղղուել դէպ լոյս կարօտով...

«Քչերի միայն հոգու կանչումին
Արձագանք տուի. ցոյց տուի ուղին.
Սակայն շատերի կասկածոտ հոգին
Անզօր էր արդէն կոչելու ինձի...

«Օրէնք պիտ լինի. կասկածոտները
Գրաւած դէպ ինք խաբեբաներին.
Անցած են ուղին գաղթակղութեան,
Իսկ վստահները ինձի՝ անմէկին...

«Գիտակիցներին այդ է վիճակուած.
Գիտակիցները—կերքան դէպի լոյս.
Սակայն, զզջացման ատեն անկասկած
Գտնեն նրանք էլ ուղին լիայոյս։

Երկար օրհներգեր լսի խմբակից,
Երկար խորհուրդներ վանքի կողմից.
Վճռական վստահ եռակի յուսով
Քայլեցի դէպ լոյս, լեցուն կարօտով...

Նայում եմ ետքիս. արդեօք, դեռ, տեսնեմ
Ապրում են իմ փուշ-մահու ծաղիկներ.
«Նրանք ջնջուած են,—յանկարծ լսում եմ,—
—Նրանց ջնջել են զզջումիդ խօսքեր»...

Ինչքան ջերմ է այդ. ինչքան սրտի մօտ.
Ու կորովն այնպէս եռում է իմ մէջ.
Ու լոյս են տալիս ճամբիս միշտ խնդոտ
Նոր նոր արևներ ու աստղեր անշէջ...

Հ. Ա.—եան

ԵԿԱՐԸ

— Ճիլտա, եկուր, մայրիկը կը արթննայ։

Ու փոքրիկ տղան մօտեցաւ իր հօրը։ Զորս տարեկան տղայ մը էր ան, երկար ու սև մազերը ձգուած էին ուսերուն վրայ։ Աչքերը անուշիկ էին, անմեղ և արտայայտիչ։ Հայրը գրկեց զայն, ու Ճիլտան նստաւ անոր ծունկերուն վրայ—Իրիկուն էր, մայիսի գեղեցիկ, ոսկէ վառ իրիկուն մը։ Կիսաբաց պատուհանէն հեռաւոր դաշտերը կը երևէին մութ, կանաչութեան մէջ ու բոցավառ հորիզոնները, որոնք հետզհետէ կը բացուէին աւելի շլացնող, աւելի պայծառ։

— Ճիլտա, ինչու՞ կուլաս։

Հայրը կը սեղմէր զայն իր կրծքին, ուժով, այնքան ուժով, կարծես սրտին բաժակը պարպել կը ուզէր իր հոգեհատորին աչքերուն մէջ, որոնք արցունքով կը լեցուէին։ Ճիլտան կը սկսէր հեկեկալ։

— Մայրիկը կը արթննայ եթէ լաս, մի՛ լար, հոգի՛ս։

— Ի՞նչ ունի մայրիկը, հայրիկ։

— Մայրիկը հիւանդ է, Ճիլտա, մի՛ լար։

Տղան լուռ էր ու կը դիտէր իւր հօրը աչքերուն մէջ։

Հետզհետէ սուերները լեցուցին սենեակին բոլոր անկիւնները։ Ճիլտան քնացաւ իր հօրը թևերուն մէջ։ Դուրսը բնութիւնը գեղեցիկ էր, և լուսինը կը կաթկթէր խնդալով հեռաւոր լճակին վրայ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
2419-55

—Նկարիչը կուլար կամացուկ, շատ կամացուկ վախնալով, որ կը արթննան երկուքը, Ճիլտան իր կուրծքին վրայ և կինը անկողինին մէջ։ Լուութիւն։ Պատուհանէն լուսնի ճերմակ ժպիտը կը փուէր անկողինին վրայ ու կը ողողէր իր դժգոյն պայծառութեամբ հրաշալի մերկութիւն մը։ Նկարիչը տեսեր էր զայն իրիկունը։ վերադառնալով, բայց Կլարան կը քնանար, հիւանդ էր ան, ու բժիշկը յուսահատած էր։

Ուզեց արթնացնել իր երազներուն գեղեցկութիւնը, իր յոյսերուն առաւօտը, իր արուեստին լոյսը, բայց սպասեց, սպասեց անհամբեր։ Մօտեցաւ անոր սնարին ու հանգչեցուց Ճիլտային գլուխը միւնոյն բարձին վրայ։ Նստաւ հոն հիացած, կախարդանքով։ Լուսինը փախած էր ամպերուն տակ, ելաւ, վառեց լամբարը, կտաւը պատրաստեց, բացաւ ներկերուն տուփը, վրձինը առաւ և ուզեց իր հոգին, իր երազը թափել հոն, ներկերուն մէջ։

Սիրտը կը դողար, աչքերը թաց էին միշտ, իսկ վրձինը կը շարժուէր կտաւին վրայ անընդհատ։

— Կլարա...

Միայն մի անգամ տուաւ այս անունը, յետոյ սկսաւ հեկեկալ տղու մը պէս։

Ծովեզերքը հանդիպած էր անոր։ Կլարան լոգանքի ատէն դիցուհիի մը կը նմանէր, կաթնափայլ հիանային՝ որ իր ներդաշնակ մարմինը կը ծածկէր առուակներու ծփանքին մէջ անոր քնքշութեամբ և ըսած էր.

— Արուեստին լոյսը կըտեսնեմ Ձեր մարմնին մէջ, կուզէք արդեօք խառնել ձեր հոգին իմինիս...

Եւ երկու լոյսեր խառնուած էին իրարու, երկու դաշնակութիւններ կազմած էին քնար մը ոսկի լարերով։

Ինչեր ուզած էր հնչել այդ քնարին վրայ, ինչ անոյշ զգացումներ, ինչ սիրուն երազներ, ինչ թանկագին յոյսեր...

Կլարային մերկութիւնը, իր իդէալն էր ան, նկարի մը չքնաղ առարկան, բայց կինը բնաւ չէր ուզած մերկանալ այս դիտաւորութեամբ։ Եւ այն իրիկուն նկարիչը զարմանքով դիտած էր զայն բոլորովին մերկ ու տարածուած հրապուրիչ ձևով մը։

— Կլարա...

Արշալոյսը կը բացուէր։ Անոր պէս կ'արթնանար իմ անուշիկ Կլարան, կը մտածէր նկարիչը, արշալոյսին պէս, իսկ հիմա կը քնանայ։

Մօտեցուց իր շրթունքները անոր վարդի պէս կիսաբաց բերանին և հաւբոյրով մը արթնցուց զայն։

— Կլարա՛ տես և ցոյց տուաւ նկարը։

Կնոջ խոշոր աչքերը տեսան և յետոյ անորոշ ժպիտ մը դողալով մարեցաւ անոնց մէջ։

Կինը բռնեց նկարիչի ձեռքերէն, համբուրեց զանոնք սրտանց ու մրմնջեց։

— Շնորհակալ եմ, անոյշ նկարիչ, իմ սիրական ընկեր։

Ճիլտան կը քընանար։ Կլարան չի խօսեցաւ այլևս, փորձեց նստել, նկարիչը օգնեց անոր, բայց իր գլուխը իր գլուխը ինկաւ կուրծքին վրայ, աչքերը բացուեցան ու վերջին անգամ տեսան նկարը։ Կլարան մեռած էր։

Նկարիչը սպասեց, սպասեց որ արթնար իր երազներուն միւս առարկան, իր յոյսերուն միւս գեղեցկութիւնը։ Ճիլտան...

Տղան արթննալով տեսաւ նկարը, իր անոյշ աչքերը սևեռեց անոր և հեկեկալով ճչաց.

— Մայրիկ, մայրիկ...

Փառքը ծնած էր նկարիչին համար, իսկ սէրը չի կար այլևս, սէրը՝ որ խզուած էր իբրև քնարի մը ոսկեղէն լարը և լռած, իբրև քաղցր եղանակ մը իրիկուան թափանցիկ ստուերներուն մէջ...

Արսէն-Երկաթ

Գահիրէ (Եգիպտոս).

ՀՈԳԻՆ

I

Հեռու մարդկանցից հեռու անյայտնում,
Սառը ձիւների անյաղթ աշխարհում
Երևում, ահա, տեսէք, մի դղեակ,
Որպէս սևապատ թռչունանց վանդակ։
Այնտեղ, ուր մարդը բաժան աշխարհից
Երազների մէջ միայն պարփակւած
Եւ հազարաւոր մեռած յոյսերից
Զօրում է մէկին, որ միա վառւած.
Այնտեղ, ուր տանջանք կեանքին հալածում,

Այնտեղ, ուր յոյզեր մէկէն չքանում,
Ուր էլ չեն հասնում կեանքի վայելքները,
Ուր էլ չեն հնչում կեանքի վառ երգեր.
Ուր կասկածում է մարդ, որ ինքը մարդ է,
Ո՛չ երազային աննիւթ էութիւն,
Ամենայն ատեն վարանման մէջ է
Կեանք կուզէ երգել—չէ հնչում լեզուն.
Տեսէք, ահա, այնտեղ ընկած բանդարկեալ
Խոնաւ, սառ գետնին գիշերում խաւար,
Զառանցում է նա վերջին շնչի մէջ,
Մարդու է կանչում, կանչում է անվերջ.
Նրա կուրծք վիժքով վեր վար բարձրանում,
Կարծես իր կեանքն է նա այնտեղ այրում,
Եւ մասիկ-մասիկ շրջաններ կեանքի
Փչում վայրկեանում առանց մի խօսքի...

II

Գիշեր է, գիշեր, սոսկալի գիշեր,
Վիժում է քամին համերգ է երգում
Ու վախվխելով ցոլում են աստղեր
Բարձր, տխրամած մռայլ եթերում...

III

Գիշեր, դու, խորհուրդ, օ, կեանքի գաղտնիք
Ինչքա՜ր են թագնուած քո մութ ծալքերում.
Քո լայն փէջերում կորչում է երկինք
Մի բոպէ յանկարծ, և մէկ էլ նայում։
Ահաւոր ես դու, բայց և գեղեցիկ
Մահին որոնում,—բայց և կեանք սիրում.
Քո խաւար ծոցում բացւում է ծաղիկ
Փէշքու

Ու քայլում էի դէպ լոյսը պայծառ
Կեանքս էր այնտեղ փառօք երևում.
Ես յուսով էի, որ պիտ հասնէի
Այն լոյս պայծառում անսաս կանգնէի,
Հաւատում էի. բայց սխալուեցի.
Ամբողջ եռանդս ես զոհ բերեցի
Մի գեղատեսիլ ու դիւթիչ կոյսի
Եւ ես խաբուեցի...
Աստուածուհի էր նա.
Ամբողջ էութիւնըս պաշտում էր նրան.
Աւելի անգամ պաշտեցի նրան
Հեռու փայլփլող լոյսից փառաւոր։
Ես մոլորուեցի
Մոռացայ մէկէն այն լոյսը պայծառ,
Աչքերս հայեացքս կորաւ այդտեղէն.
Եւ ընկաւ մէկէն կոյսի աչերին,
Որք ցոլում էին որպէս աստղեր վառ.
Նրանցով տարուած հիասթափուեցի
Ամբողջ յոյսերս յոգը ցնդեցան.
Կոյս առողջութիւն զոհաբերեցի
Որ չփոխարինուի երբէք յաւիտեան։
Մէկէն փոխուեցի մարդուց ես բոլոր.
Աւազակ դարձայ և ընկայ լեռներ
Զէր անցնում երբէք երբէք մի լոյս օր,
Որ չը թափուէին իմ ձեռքից զոհեր...
Կատաղած էի. ատում էի ես անուն մարդ-
կային
Ատելութիւնըս յախուռն, որպէս մի կիրքի
վիժում—
Եւ միշտ մարդկային կտրմիր արիւնին
Աղօթելու ես ծունր էի իջնում...
Եւ ես բռնուեցի ու ինձ բանտ առան
Հեռու մարդկանցից այ, այստեղ բերան,
Իբրև սրիկայ, իբրև աւազակ
Զգեցին այստեղ այս մահու դղեակ։
Անցան տարիներ ես սթափուեցի
Ու սուր հայեացքս հեռուն ձգեցի.
Խաւար էր այնտեղ մութն և լռին
Ոչինչ երևում իմ սև աչքերին։
Ցիշեցի մէկէն լոյսն այն փառաւոր
Ամբողջ կեանքն իմ պատկերացուցի
Պատկերքը շարան—իմ կեանքը բոլոր
Իմ առջև շարքով շարան անցուցի...
Եւ ես զղջացի. սկսայ լացել
Աղիողորմ լացով. և իմ աչքերից
Արցունքներիս հետ, որպէս վառ կայծեր
Դուրս էին գալիս մեղքերս սև-սև։
Օ՛, և այդ լացը քանդեց իմ հոգին
Փշրեց իմ սիրտը—խիղճս արթնցրեց
Եւ իմ վանդակած մեռած ուղեղին
Մեղմիւ շոյանքով երեսը բացեց։
Մէկէն փոխուեցի դարձայ մարդասէր
Այժմ ձգտում եմ դէպի մարդկութիւն.
Նորէն վառուեցին աղօտ իմ յոյսեր
Սլանում հոգիս դէպ ապատութիւն...
Այժմ տենչում եմ ապրել մարդկանց հետ
Մինչ ի մահ գործել ճշ, նոցա համար,
Որ իմ անցեալի գործերը յաւէտ,
Էլ չըկրկնուեն, չերևան դարձեալ։
Որպէս փափագով կսիրեմ մարդկանց
Այնպիսի՛ սիրով կսիրեմ սրտանց,
Որ իմ ցաւերը բոլոր մոռացած
Միշտէլ կաշխատեմ պաշտպանել նրանց։
Կըկռեմ, զոհեմ մարդկութեան օգտին,
Նրա սրբութեան և եղբայրութեան.
Եւ կրծքիս բռնած եռգոյն դրօշին
Կըտանեմ նոցա դէպ վայր հանգստեան...
Սնափառ երազ. արդէն մահուան ժամ.
Եւ կեանքս ահա կըմեռնի աղօտ.
Բայց դու լուսափայլ, Տիրոջ դու ծառայ,
Հասկացուր մարդկանց դու նրանց ասա՛.
Բաց թողնեն բոլոր խղճից տառապած
Զղջման մէջ անյոյս անցեալը լացած
Հրեշտակ. տառապեալներին...
Վերջացրի՞ ես դու համաձայն եմ ես.
Տիրոջ հրամանաւ այդպէս կլինի.
Կգայ ժամանակ այ ահա կարծես
Երևում է նա, դանդաղ է գալի.
Եւ դու էլ որպէս զոհը առաջին
Պիտ տանեմ քեզի նայիր, դէպ երկինք,
Վասն զի առանց ո՛ և է զոհի
Երբէք չստացուիր և ոչ մի բարիք։
Բանաստեղծ.
Ո՞վ դու երկնային լուսափայլ հրեշտակ,
Մեծ ուրախութեամբ գալիս եմ ահա.
Ես ոչ թէ զոհեմ, այլ փառքի պսակ
Ապագայ մարդկանց...

Ռ. Յովանէս

ՀՈԳԵՒԱՐՔԻ ԵՐԳԵՐԻՑ

[Ծաղկամանը]

Այնպէս շուտ եկաւ այս ձմեռը ո՞ր...

Ամենայն ինչ ծածկուեց մարմանդ ձիւնի փաթիլների տակ...

Դառնացած հոգուս վրայ կուտակւում է վշտերի անվերջ շտրանը... Ես զգում եմ միայնութիւն...

Այժմ է, որ ես զգում եմ միայնակութիւն, որպէս մենաւոր թռչունը վանդակի մէջ։

Ընկերով լաւ էր... էլ դու չկաս, իմ հոգու միակ տենչը... Դու մեռար և լուծեցար յաւերժութեան հետ... Այնպէս կարօտալից յիշում եմ գարունը հր... Վտակի կարկաչը, ծաղիկների սօսափիւնը... Իսկ այժմ...

Այժմ ձմեռ է և ամենայն ինչ ձիւնապատ։ Սիրտս տիրել մութ խաւար գիշերը։

Լսում եմ պատուհանս հարուածող քամիների անվերջ մռնչիւնը, որը լիզելով պատուհանիս ապակիները անցնում է հեռու շատ հեռու...

Ցուսահատօրէն կանգնած էի պատուհանիս առաջ, յանկարծ յիշեցի իմ ծաղկամանը, որի գեղեցիկ ու անուշաբոյր ծաղիկներով գարնանը զմայլւում էի և մէկիկ-մէկիկ պոկելով ծաղիկը թփից, տանում էի նրա համար...

Մոռացել էի ծաղկամանը, կարծես նա էլ նրա պէս գոյութիւն չունէր ինձ համար...

Թողած պատուհանիս տակ մունչացող քամիները, մօտենում եմ ծաղկամանիս։

Առաջին իսկ հայեացք գցելուցս տեսայ, որ էլ նա նոյնը չէ, ինչ որ առաջ...

Կանգնած այդ ծաղկամանի մօտ, նայում եմ յուսահատ նրա թօշնած ու դալուկ տերևներին, որոնք ամքած ու կծկւած արդէն մէկիկ-մէկիկ թափուել են ծաղկամանի շուրջը թփից անշնչացած, գետնի վրայ... Անգիտակցօրէն ես ոտքերովս տրորում եմ անշնչացած տերևները, որոնք խշխշալով ոտքերիս տակ փշրւում են մանրիկ հատիկների...

Անշնչացած տերևները խշշում են ոտքերիս տակ անվերջ...

Ես սթափւած նայում եմ մի րոպէ իմ վարմունքին...

Լի է ոտքերիս տակը փշրուած տերևների մանրիկ հատիկներով...

Զոնարհելով մինչ գետինը. ես վերցնում եմ ոտքերիս տակ փշրուած տերևները մէկիկ-մէկիկ սեղմում եմ շուրթերիս, համբուրում ու անվերջ հեծեծում...

Թողած ծաղկամանը, մօտենում եմ պատուհանիս և նայում հեռու...

Ոչ մի բան չի երևում աչքիս...

Նայում եմ մօտիկ դերեզմանատան քարերին, դրանք էլ են ծածկուել ձիւնի տակ...

Իսկ իմ ծաղկամանը...

Աչքերիս առաջ տեսնում եմ նրա մահը... Նայելով ծաղկամանին ես հեծեծում եմ մի անյայտ վշտից... չգիտեմ ինչու... կարծես ես լսում եմ մեռնող ծաղիկի վերջին մըրմընջոցը...

Մի տխուր վշտոց եմ լսում, ուր կարծես լացող տերևների հրծծիւնը լինի...

Նայելով ծաղկամանիս մէջ վաղուց մահացած ծաղկին, մէկիկ-մէկիկ մեռնում հոգուս ներսը պճնուած յոսերս... են

Մտածում եմ, որ կըգայ մէկ օր, ես էլ այդ ծաղկի պէս, միայնակ, անընկեր, աննըշան կմեռնեմ յաւէտ և ամենայն ինչ կծածկուի յաւիտենականութեան մշտենջենաւոր քողի տակ, թէ իմ միտքը և թէ վառ երևակայութեան ստեղծագործութեան ոյժը և թէ մտածմունքի ծնունդը...

Բոլորը, բոլորը այդ ծաղկի պէս կմեռնեն, ինչ որ կայ իմ մէջ, իմ էութեան մէջ...

Եւ կգայ մէկ օր, վառ յոյսեր սրտիս, երբ պէտք է դիմաւորէի նորեկ արշալոյսը, կմեռնեմ այնպէս աննշան, ինչպէս այս ծաղիկը ծաղկամանի մէջ...

Դեռ ծաղկամանի վրայ կայ մի սիրտ, մի կաբեկից մարդ, որ լալիս է անվերջ նրա թանկագին կորուստը, իսկ ինձ վրայ ո՞վ կլայ, երբ ես էլ այդպէս մեռնեմ...

Ո՞վ գիտէ, գուցէ հէնց մահս մօտ է...

Գուցէ հէնց այս րոպէիս ես էլ անշնչացած վայր կընկնեմ և մէն մէնակ, առանց մի կաթիլ արցունքի կմիանամ յաւերժութեան հետ...

Մօտենում է գիշերը...

Ամենայն ինչ կամաց-կամաց ծածկւում են վերջալոյսի մարւող դողերի տակ աչքիցս...

Միայնակ կանգնած եմ պատուհանիս առաջ նայում եմ հեռուն...

Խաւարի մէջ լուսոյ նշոյլներ եմ որոնում անհուն տենչանքով...

Այնպէս կարօտցել եմ քեզ ո՞ր, դո՛ւ, իմ հեռաւոր քոյրիկ, անուրջ աղջիկ...

Սև գիշերն է հեծեծում ամենուրէք մենաւոր բուի պէս...

Ես անշարժ եմ...

Ձմեռւայ ուշացած քամին գալիս, ծեծում է պատուհանս և հեծկլտում։

Կարծես կարապն է երգում իւր մահւան վերջին մեղեդին։

Ա՜խ, ինչպէ՞ս կցանկանայի նորէն տեսնել վարդաբեր գարունը...

Բայց նա ուշ է...

Ես կմեռնեմ...

Հէնց վաղը... մի ժամից մի վայրկեանից յետոյ և ամենայն ինչ իմ մէջ կտանեմ սառն շիրիմը...

Բայց և այնպէս դեռ շատ կան ունիմ ասելու...

Ինչպէս կը ցանկանայի նորէն լսել առւոյի կարկաչը...

Բայց քամին այնպէս է հեծկլտում և չանկռտում պատուհաններս՝ մտնելու տենչով...

Ամենայն ինչ մեռնում է իմ մէջ... Հոգեւարքը երգն եմ լսում եմ հոգու մէջ...

Կմեռնեմ, կտանեմ և ոսկէվառ յոյսերս դեռ չը ծլած, կտանեմ իմ բիւրաւոր տենչանքներս դեռ չը ծաղկած...

Ես էլ կըմեռնեմ այդ ծաղկի պէս շուտով, անընկեր, մենակ և կլուծւեմ յաւիտենականութեան հետ...

Բայդ որքան կցանկանայի գէթ մահւանից առաջ մի գործ թողնել, որ ինձնից յետոյ շարունակւէր...

Փառք անմահներին...

Բերլին. Ս. Վտարանդի

ԲԱՆՏՈՒՄ

Արի՛ քամի, փչէ՛ ուժգին,
ու ձայնակցիր իմ լացին
Արի՛ քամի, փչէ՛ ուժգին,
տեղեակ եղիր իմ դարդին։

Չէ՞ որ, քամի, ցաւը սրտիս
քեզ ասացի, որ հատնի,
Ինչո՞ւ թողիր ինձ հեռացար
անուշադիր իմ խօսքին...

Կար ժամանակ ես էլ ուրախ
անհոգ էի անտրտում,
Այժմ ցաւում եմ մութ բանտի
նեղ ու խոնաւ ծալքերում...

Արի՛ քամի, փչէ՛ ուժգին,
ու ձայնակցիր իմ լացին
Արի՛ քամի փչէ՛ ուժգին
տեղեակ եղիր իմ դարդին...

Մանուկ Աբգ.

Թիֆլիս.

* * *

Կեանքի ժըխորից կուզեմ հեռանալ
Բնակւել այնտեղ աստղերի ցանցում.
Մի վայրկեան կուզեմ բոլորին մոռնալ
Քուն մտնել վսեմ լուսթեան ծոցում։

Կուզեմ հեռանալ ես կեանքի բովից,
Գոնէ մի վայրկեան մենակ խորհելու.
Կուզեմ մոռանալ աշուն ու թախիծ
Ու ճախրել ազատ, աստղերից աստղեր...

Արտ. Գաբրիէլեան

ԿԵԱՆՔԻ ՀԷՔԻԱԹՆԵՐ

(Մինիատիւրներ Ս. Ասարովի).

I.

Անսահման տարածութեան մէջ, ուր որ յաւիտեան մոլորակների գաղտնի երաժշտութիւնն է լսւում, պատահեցին երկու երկրային հրէշտակներ։ Նրանք «Լեռնոտ-գիւղերն» էին վերադառնում...

Նրանցից մէկը, որ սպիտակ էր հագած ասաց.

— Երկրի վրայ շատ եմ ապրել ես... Թշուառութիւնը, ցաւը և տանջանքը լցել են իմ հոգու խորքը... Ամբողջ մտածումներս լեցուած են ասես թոյն տնքոցներով և արցունքներով, իմ աչքերը վարակուած են հիւանդութեամբ, ես այնտեղ այլևս չեմ կարող մնալ...

— Ի՞նչ ես արել դու նրանց համար, այդ դժբախտների համար...

— Լսիր... Նրանց մէջ չմնաց ոչ մի մօտ ցաւօտ միտք, նրանք կորցրին ամեն ազատ տանջանքի զգացմունք, նրանց ուրախութիւնը այնքան մօտ է տխրութեան, որ նրանք յաւիտեան տխուր են... Նրանց քաղաքը այնքան լի է արցունքներով, նրանց երազները լի են այնքան տանջանքներով, որ նրանց բոլոր զգացմունքները հաւաքուած են մի անվերջ մի անլուռ յոգնածութեան մէջ... Նրանք մոռացել են, որ ծիծաղում են ծաղիկները, որ գարունը լաւ է, որ ամառուան խոտը փափուկ է և քնքոյշ...

— Բայց ի՞նչ ես արել դու նրանց համար։

— Ես աշխատել եմ յաւիտեան ցամաքեցնել նրանց արցունքներն և թաց աչքերը... Շատ արցունք է թափուում հողի վրայ... Բայց այդ այլևս չի լինի... Լսո՞ւմ ես արցունքների վերջն է եկել և կը տիրապետեն հանգստութիւն և սէր բոլոր սրտերում...

— Դու կարծում ես թէ օգնե՞լ ես նրանց... Դու կարծում ես թէ ազատե՞լ ես նրանց...

— Այո... ես ժողովել եմ մարդկանց արցունքները մի մեծ բաժակի մէջ, այնքան մեծ, որ կարողանայ ողողել իր առուներով աստղերի խաղաղ լոյսը... Ես ժողովել եմ մարդկանց, կոյսերի և ծերերի արցունքները... և Աստծուն եմ ուղարկել իմ բաժակը. ես ցրուել եմ նրանց տանջանքները... Աստուծոյ մօտ է իմ բաժակը և նրա յետևից գնում եմ ես վկայելու... Այլ ես արցունք չի լինի. իսկ դու, եղբայր, ի՞նչ ես արել նրանց համար...

— Ես էլ տեսել եմ այն բոլորը, որ տխրեցրել է քեզ... Ես էլ լսել եմ այն բոլորը, որ վրդովում է քեզ... Եւ դեռ աւելի եմ զգացել... Բոլորը գիտեմ...

— Բայց ի՞նչ ես արել դու նրանց համար։

— Խեղճ իմ, անմիտ եղբայր, ես կոտրել եմ քո բաժակը...

Թարգմ. Մուշ. Տէր-Յովհաննիսեան

ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՒՐԸ

Որ. Բաբայեանին

Արծաթ ու ալմաղ շիթերով դող է տալիս, փրփրում, կլորկաչ հանում, փսփսում աղբիւրը մեր գիւղի...

Վտակ դառած խայտալէն, հոսում է զնգալէն քար սարերից մամռապատ ժայռերից վար գալարուելով, վեր դող տալով մաղլցում, հրճւում է շիթալէն...

Ցորձանք է տալիս, մերթ բուռն կերպով մռնչում, մամռապատ ժայռերի ծերպերը լիզում։ Մերթ հանգստանում է ու եզերքի գլխիկոր ու վշտոտ, սգաւոր ուռենիներին օրօր մրմնջում ու անուշ անուշ մնջում...

Ջուր է տալում դող տալէն, վար է գալարուում փրփրելով ու անուշ,անուշ խոխոջում.. ու պատմում է, պատմում հեքիաթներ զըմբուխտէ...

Ու ես մեն մենակ աղբիւրի քովը ունկն էի դնում նրա քաղցր հեքին...—արծաթ ու ալմաղ աղբիւրի վշտոտ, վիրաւոր մրմունջին...

Օ՜,հայրենի լեռներ, ազատ օդդ ու աղբիւրդ մայր սեփական ու դուն քովը պառկած...

—Նա պատմում է խօսում անվերջ, օրօր ասում ինձ ու ես քուն եմ մտնում...

Քունն անուշ, անուշ...։

—Օ՜, քաղցր, մեր ալմաղ աղբիւրի ջրի հեքիաթական հիւսուածքը...

Ու երբ ջուրն եմ խմում կորացած դէպի աղբիւրը, նա նորէն վեր է ցատկում վար իջնում ու ինձ անուշ համբուրում, վառ կաթսն առնում... օ՜, ի՜նչ քաղցր է նրա համբոյրը, վճիտ ու յստակ...

Ու կանգնած նայում եմ հեքիաթասէր մեր աղբիւրին...

Եւ հոգիս փշրուած ու վշտոտ, նոր ծնունդ է առնում, վերածնուում անվիշտ ու ես խորը ներշնչուում եմ հեքիաթներով մեր աղբիւրի..

Ու հեռանում են ակամայ, բայց զնգում է նրա երգը ականջիս...—իսկ համբո՞յրը...

Օ, այն համբոյրը քաղցր ու մայրենի...

Գաբրիէլ-Ֆիտունի

* * *

Պշիբշեւսկուց

Իմ հպարտ հոգին թռչաւորում է սիրոյ յաղթական ոյժի մէջ և երգում.

Ո՜հ, գարնանային օր, մենամարտի յաղթութեան ու հպարտ տիրապետութեան օր...

Գարնանային առաջին վառ կանաչով ծածկուեցին դաշտերն ու մարգագետինները...

Սաղարթախիտ այգու տանձենիք ու խնձորենիք զուգեցին սպիտակափայլ ծաղիկներով, նման սպիտակափայլ հարսանեկան զգեստի...

Ճառագայթների տարափի միջից ժպտում է պայծառ օրը. ոսկեփայլ արեգի սանդրով յարդարում է նա խշշացող ծառատունկերի կանաչավառ սաղարթները. ոսկու շիթերով գոտեպնդում է նա լեռներն ու սարերը, և բովանդակ աշխարհի վրայ հնչում է նրա սիրոյ ցնորքների, երջանկութեան անըմբռնելի խոստումների երգը, որը առկայծում է կենդանի սիրոյ հուրհրատներ ժարդկանց սրտերի մէջ, հոգին խռովում և սիրոյ թեւերին տալիս է արծւի արագաթռիչ թեւերի ոյժն ու կորովը...

Պինդ հպուիր իմ սիրառատ կրծքին Քո հրեշտակի գլխիկով պարուրիր իմ վիրաւոր սիրտը Քո մազերի ոսկեթել գանգուրներով և լսիր իմ զգայուն սրտի ուրախալի թրթիռը...

Դու ինձ համար երկիրն ես կենդանի, որ ոսկով ու արծաթով է ծլում ծաղկում գարնանային արեգի կենսատու ճառագայթների տակ...

Դու ինձ համար օրւայ ուրախալի բարի լուրն ես, որ իմ թմրած հոգուն զարթեցնում ես, որպէսզի նա ծլի ու ծաղկի այնտեղ, որտեղ իմ հայեացքը չի կարողանալու հասնել...

Դու ինձ համար ծնւող լոյսն ես ճառագայթափայլ, աստղն ես առաջին արեգակնափայլ, իմ մատաղ կեանքի փարթամ գարունն ես Դու, նրա օրը և նրա գիշերը, ցանկութիւններիս ու տենչերիս կատարումն ու իդէալներիս ձգտումն ես Դու...

Հոգուս միակ մանեակն ես Դու, նրա անըմբռնելի երազի ու իրականութեան միջի տատանումների հնչիւնն ես Դու և վերջապէս իմ հոգու ասուածուհին ես Դու, որին ես միշտ ուղղել եմ իմ մաքուր ու անբիծ աղօթքներն ու մտորումները...

Անցնենք, աղաւնեակս, մեր մատաղ գարնան օրւայ և գիշերւայ վրայով...

* * *

Եւ հիմա ժպտում է հոգիս հպարտ անդրերկրային երջանկութեամբ—ես երկիրն երկնքի հետ հաշտեցրի—հաշտեցրի նաև այն ամենի հետ, որ գոյութիւն ունի երկրիս երեսին, և այն ամենի հետ, որ երկնքնումն է փայլատակում...

Ես լարեցի ոսկի թելեր, և Դու, իմ միակ անբիծ ու մաքուր սէր, զարկիր ինձ հետ միասին այդ յաւիտենական քնարի թելերին. բովանդակ աշխարհը թող երգէ մեր սուրբ սիրոյ, մեծ երգը, այն սուրբ ոիրոյ, որ ամեն ինչ է և որ ամեն ինչ կայ...

Անցնենք, աղաւնեակս, մեր մատաղ գարնան օրուայ և գիշերւայ վրայով...

Յար. Յարութիւնեան

Նախիջևան Դ/վ.

ՄԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

(ա)

Ահեղաշունչ պատերազմը մոռացրեց ամեն ինչ։ Եւ վերջին տարիների սկսակնեերի երևան գալը ասես միանգամայն ընկաւ ու նորանոր մտքերը զբաղեցին ահաւոր սարսափով։

Բայց պատերազմի վերջը հեռու էր և այդ պատճառով իրենց սպասումները չկրցան երկար ատեն պահել և սկսեցին այս ու այն կողմ գարձեալ փայլել այդ արտայայտութիւնները, թէև 'ի հարկէ, ոչ առաջւան պէս

Վերջին տարիների սկսնակների մէջ մի ուրոյն գիծ է նկատւում— լինել բանաստեղծ (մեծամտութիւն.)և դրա հետ մէկտեղ ամենուր իրենց եսական վայելքներն ու սէրը ի յայտ բերել։

Եւ ի՞նչ եք կարծում, յարգելի ընթերցող, մի քաոս է ստեղծւում,ուր չի կարելի որոշել մարդկութեան ձգտումների իրագործման աստիճանը...

Միշտ յառաջ...

Յառաջ այնպէս, ինչպէս պէտք է. յառաջ ժողով, կամքով, էութեամբ

Սակայն բոլոր եսականութիւնները մեռցընում են մարդու մէջ ընդհանուր գաղափարը և սեփական վայելքներով առաջնորդում դէպի կենդանացումը, (Աստուածացման փոխարէն) դէպի յաւիտենական կորուստը...

Դառնանք այժմ մի բանի, աշխատենք ամենայն կերպ կարճ կտրել, ժանրամասնութիւնները թողնելով ապագային։

Ինչ ենք տեսնում սակայն մեծ դէմքերի խորհուրդների մէջ։

Բաւական է շատ գրքեր կարդացած լինիս և այդ էլ մի որոշ ուղղութեան,—և դու արդէն հասուն ես։

Սկսնակները գնում են մեծերի մօտ և վերջիններըս խորհուրդ են տալիս շատ գրքեր կարդալ...

Բայց ինչպիսի գրքեր են կարդում։ Կարդացին վերջացրին ու սկսեցին «դրել»(անգիտակցութիւն)։

Այդ դրելը մի առանձին թափ է ստացել վերջին մի քանի տարիները և սակայն այն պիսի դրել, որպիսին դէպի, եթէ կարելի է այսպէս ասել, յիմարութիւնն է տանում,դէպի հին կենդանական կաշկանդումը։

Սակայն ինչպէս ասացի, կարճ կտրելով ասելիքս, աւելացնեմ, որ չեմ հաւատում այդպիսի յառաջադիմութեան. դա ոչ թէ յառաջդիմութիւն է —այլ յետադիմութիւն —մի ախտաւոր, անգիտակ ներշնչածութիւն, որ միայն ան-բանական կենդանիներին է յատուկ։

Խորհուրդ ենք տալիս վերջին անգամ այդ նման սկսնակներին, որ սկսեն ճանաչել իրենց, շրջապատը, բնութիւնը և ձգտել դէպի ճշմարիտը— ու այն ժամանակ նախ իրենց արտայայտութիւնները մտացածին կը լինին, բառիս իսկական իմաստով ույառաջադիմած։

Յուսանք, քանի որ այդ գիտակցութիւնը տուած է մարդուս։

Գրաիխոս.

ՄԱԳԻԱ *)

(Magio, Սպիրիտիզմ)

Ժիլ՝ Գաստոն Բուրժա

—

Ռուս թարգմանչից

Այս գիրքը օկկուլտիզմի հիմնական գաղափարների մի կարճ բիզիւմէն է ներկայացնում, պօպուլեար ձևով գրուած։ Բացի այդ, նա ուրիշ իւրաքանչիւր գրքի նման իւր մէջ պարունակում է հեղինակի անձնական հայեացքներն ու հակումները։

Այդ պատճառով էլ մենք աւելորդ չենք համարում, նա հասկանալու, ուսումնասիրելու դէպքում սխալներից խուսափելու համար, բացի այդ և նրա հայեացքները և կարծիքները օկկուլտական վարդապետութեան անփոփոխ հիմքերի դասը դասելու կարելիութեան համար,—իսկութեամբ որոշել այն սահմանը, որ բաժանում է առաջինները վերջիններից։

Կարծում ենք, որ այդ հարցը վճռուած կը լինի, եթէ մենք ընթերցողին ծանօթացնենք Պապիւսի առաջնորդող ցուցմունքների հետ այդ առարկայի վերաբերեալ, նրա «Տարրական հասկացողութիւններ օկկուլտիզմի մասին» գրքից։

Պապիւսը օկկուլտիզմը բաժանում է երկու գլխաւոր մասի.

1) Անփոփոխ մաս, աւանդութեան հիմք ծառայող, որ կարելի է գտնել հերմետիստների գրուածքներում, ինչ ժամանակի որ է կամ ինչ ազգութեան և

2)Իրեն հեղինակին պատկանող մաս, բաղկացած բացատրութիւններից և սեփական փորձերի տեսութիւնից։

Առաջի (անփոփոխ) մասի մասին Պապիւսը ասում է.

Այս մասը բաժանուում է երկու մասի.

ա)Երեք միաւորութեան գոյութիւնը, իբրև գործողութեան հիմնական օրէնք տիեզերքի բոլոր պլաններում (մարդը կարող է միաւո-

---

*) Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այժմեան սկսնակների մեծ մասը, լինելով տարբրական դպրոցների աշակերտներ, կամ այլ ինքնազարգացման ճամբի, սկսել է գրել միայն այն (ոչ ի հարկէ բոլոր սկսնակները) ինչ որ վերացական է

րի հասնել, եթէ լուծէ նրա սկզբնաւորութեան երեք պլանները։ Այստեղից է՝ կասմագոնիաների մեծ մասի Աստուածային երրորդութիւնը, մարդկային երրորդութիւն—Հոգի—Ոգի—և Մարմին և ունիտարների գաղափարի համաձրութիւնը Աստուծոյ և մարդու մասին)։

բ) Տիեզերքի տեսանելի անտեսանելի մասերը կապակցող համապատասխանութիւնների գոյութիւնը։

(Այստեղ էզոտերիկ ցուցմունքներն են աստրալ աշխարհի մասին, բնութեան, մարդու և տարածութեան մէջ ապրող անտեսանելի էակների թագնուած ուժերի մասին)։

Օկկուլտիզմի հակառակորդները, ինչպէս արդարօրէն նկատում է Պապիւսը, մտադրուած խառնում են այս երկու մասերը—(անփոփոխ և հեղինակի անձնական հայեացքների արտայայտութիւններ մասերը), որպէսզի պատճառներ ստանան այդպիսով օկկուլտիզմի դէմ։ Մինչ այդ նրա հետևորդների մէջ կարող են լինել փիլիսոփայութեան, կրօնի, քաղաքականութեան մօրալի և ուր. հարցերի մասին բազմազան կարծիքներիմարդիկ։ Ծիծաղելի կլինի բռնել նրանցմէ մէկի հայեացքներն ու դատողութիւնները մի մասնաւոր հարցի մասին և այդ դատողութիւնները օկկուլտական վարդապետութեան հիմքերի տեղ դնել։

Կառավարուելով վերև բերուած սխեմայով, ընթերցողը չի ընկնիլ նման սխալի մէջ և նրա առանձին հայեացքները և օկկուլտիզմի վերաբերեալ գրուած իւրաքանչիւր գրքի արդիւնքների անհամաձայնութիւնները չեն ազդիլ նրա օկկուլտիզմի հիմքերի վերաբերեալ ունեցած հաստատութեան վրայ։ Այդ հիմնական սկզբունքների լուսաւորութիւնը այս գրքի մէջ մեզ ճիշտ է թուում և այդ պատճառով մենք չենք տատանուում հրատարակել այն ընթերցողին, չնայած, որ գուցէ մի քանի մասնաւոր հարցերի մէջ մենք համաձայն չենք նրա հեղինակի հետ։

Վերջում աւելորդ չենք համարում յայտնել, որ գրքի սիւժէն էապէս շատ լայն է, քան կարելի է ենթադրել նրա անունից։

Հեղինակը միայն մագիայի մասին չէ խօսում, այս խօսքի նեղ մտքով (որի տակ սովորաբար հասկացուում է աստրալ ուժերի ուսումնասիրութիւնը և նրանց գործածելու կերպերը), բայց և կպչում է ընդհանրապէս օկկուլտիզմի*) բոլոր մասերին և մի քանի նրա ճիւղաւորութիւններին։

Այդ պատճառը, ի հարկէ, չի պակասեցնում գրքի արժանաւորութիւնը, որ մի շարք գնահատելի տեղեկութիւններ է տալիս օկկուլտիզմը սովորել սկսողին։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր այս ընդհանուր յուզմունքի դարում, երբ բոլոր թէօրիաները, որոնք երերուն են իրենց հիմքերում խառնուած են անբևեռակայելի մի քաոսի մէջ, տաքութեան և հոգեկան յոգնածութեան դարում, երբ կրօնական հաւատացումները ընկնում են և ո-

բայց վերացական այն մտքով, որ նրանք իրենց զգացմունքից դուրս են գրել և գրում էլ են մինչև հիմա, որ նրանք ինքնազարգացումը բաւարարում են լոկ միակողմանի (ինչպէս այդ ցոյց է տալիս իրենց սեփական գրական արտայայտութիւնը) հետևողութեամբ և, որովհետև մեր թերթը մի որրան պիտի լինի այդ ուժերի յառաջադիմութեան, իսկ յառաջադիմութեան համար անհրաժեշտ է ինքնաճանաչութիւն և բազմակողմանի դատողութիւն ու, դլխաւորն է, բանականութիւն. որոշել ենք հրաւիրել (այդ նպատակով էլ ստորև դնում ենք Հ.Ա. թարգմանական հետաքրքիր ուսումնասիրութիւնը) աշխատակցելու այն կարող անձանց որոնք կկարողանան տալ մեր թերթում գիտական սկզբունքների բացատրութիւններ, որոնք կարող են խթան լինել մի երիտասարդական մասսայի ինքնաճանաչութեան ու գործունէութեան... Յան. խմբ.

*) Տալով այդպիսով մագիային «Մագերի (մոգերի) գիտութիւն» անունը նրա ամբողջութեամբ։

չընչանում, երբ կենդանին՝ բիրտ ուժը ձգտում է յափշտակել բոլորը, երբ միլիտարիզմը աւեր պատերազմներ է սպառնում ապագային, զարթնում է աւելի և աւելի ամեն ազգի մէջ ինչպէս նրա պաշտպանութեան այնպէս էլ նրա ոչնչացման համար սաւառնող ինդիւիդուալիզմի տենդը, երբ փաղաքշական սուրը մասսայից ծածկում է կատաստրոֆայի պարզամիտներին, որոնցից մեզ բաժանում է գուցէ չընչին ժամանակամիջոց — երբ ամեն մի մտածող և զատող տղամարդ, յոգնելով նիւթական թէորիաներից, չգիտէ ուր գըտնէ այն լոյսը, որին նա փնտռում է և որ ճշմարիտ է կոչւում, այս դարում, գուցէ, շատ յանդուգն թւայ Մագիայի մասին գիրք գրելը։

Բայց հէնց փոթորկին պիտի մոլորուած ուղևորին ճամբայ ցոյց տալ, օգնութեան ձեռք մեկնել խեղդուողին։

Քանի մութ է երկինքը այնքան պայծառ են փայլում շանթերը... մենք կարծում ենք որ կատարում ենք մեր պարտքը, մեր օկկուլտիս եղբայրների հետ ոչ նրա համար որ լոյսը տանք, բայց որ յամենայն դէպս որոշենք այն ուղին, որ դէպի նա է տանում։

Մեր գիրքը աւելի պօպուլեար դարձնելու համար, մենք խուսափել ենք այն գիտական տերմիններից, որոնք կարող էին մթագնել հարցը։

Ոգևորուելով լաւագոյն հեղինակներից և մեր սեփական փորձին յենուելով մենք յուսով ենք, առաջարկում ենք մեր ընթերցողներին թէև շատ համեստ, բայց բարեխիղճ և հետաքրքիր մի գործ։

Ժիլ Դաստոն Բուրժա

ԳԼՈՒԽ 1

Ի՞նչ է մագիան.—Երկու պատասխան.—Էկզոտերիզմ և էզոտերիզմ.—Ի՞նչ կըդառնայ Ֆրանսիան.

Ի՞նչ է մագիան։ Այս հարցին երկու պատասխան կայ. մի մասը մագիան համարում է մի պատճառ չունեցող հեռևորդութիւն. առաջ բերելու արհեստ, և ծիծաղում նրա վրայ մի յիմար, անքաղաքավարի ծիծաղով։ Միւսները՝ որ մագիան մի միջոց է, որ դևի միջոցով և նրա հետ կապած անխօս պայմանով կատարել այնպիսի գործեր, որոնք բնութեան դրած օրէնքները խախտում են և խստիւ դատապարտում են նրան։

Հիմնուելով անքաղաքավարութեան և մոլութեան վրայ, այս որոշումները սուտ են։ Մագիան այն է, ինչ պէտք է լինի և ոչ թէ այն ինչ որ ուզում են նրան անել։ Սա անուն է և ոչ հաւատ. վստահութիւն և ոչ հիպոթէզ. նա ընդարձակ է ինչպէս տիեզերքը. որովհետև սա բնութեան և իր օրէնքների բարձր գիտութիւնն է։

Հնդկաստանում ծաղկելով, մանաւանդ Եգիպտոսում, նա մաքրուել է և լրացուել, ներկայացնելով իրենից մի տիեզերական գիտութիւն, որ ձևակերպուած է լիակատար դոգմայի ձևով. արքայական ճաշակ է նրան նուիրուելը և այդ պատճառով էլ այն երեք արքան-կախարդ նուիրուածներ են, որոնք աստղի *) առաջնորդութեամբ գտան ծնուած Յիսուսին և բերին իրենց խորհրդաւոր նուէրները։

Մագիական ուսմունքը բաժանուում էր երկու մասի. Էկզոտերիկ, որ աւանդուում էր հրապարակով և զոզտերիկ, որ նշանակուած էր միայն նուիրուածն՝ երի համար։

Էկզոտերիզմը կազմուում էր լեգենդներից ձևերից, սիմբոլներից, որոնցից մնացել են զանազան ազգերի սուրբ գրքերը, այլաբանական պօէմներից, հէքիաթներից և դրանց շարքում արաբական հէքիաթներից (Հազար ու մի գիշեր) փերիների հեքիաթներից և այդ օտարոտի նշանների, աստղերի, շրջանների, հիերոգլիֆների գրաւիչ բազմութիւնը, որոնցով նախշած է իւրաքանչիւր գաղտնի ընկերութեան ժողովարանը և որոնք ծառայում են մեր եկեղեցիներում պղծի համար, զարմանալի գիւտերի մի ամբողջ աշխարհ է նրա համար, ով կարող կըլինի կարդալ և հասկանալ։

Էկզոտերիզմը աւանդուում էր բերանացի և այն էլ միայն այն մարդկանց, որոնք ապրել են զանազան փորձանքներ, որ և ծառայում էր, որպէս աշակերտների կամքի համարձակութեան և ուժի վաւերացում։

Նա տուեց էկզոտերիկ լեզուի տակ թագնուած գաղտնիքների բանալին և կազմեց փիլիսոփայական ու սովորելու աբստրակտ

*) Յիշեալ աստղը օկկուլտիզմի մէջ յատուկ նշանակութիւն ունի—դա բարձր գիտութեան հաղորդիչ աստղն է։

մասը։ Անհրաժեշտ են մի քանի օրինակներ պարզ գաղափար տալու համար։

Առաջին օրինակ (Աւետարան)

Էկզոտերիզմ.—Ադամն ու Եւան երկրային դրախտում օգտուում էին անչափ բարիքներից. բայց դրանից անբաւական, նախանձոտ դևը օձի կերպարանք ընդունելով դառնում է Եւային ասելով. «Աստուած ինչու չի թողնում, որ դուք ուտեք դրախտի բոլոր ծառերի պտուղներից» Եւան բոլոր կանանց նման թոյլ ու հետաքրքիր, փոխանակ նախանձ ձայնից փախչելու պատասխանում է. «Մեզ թողնուած է ուտել այս այգու բոլոր ծառերի պտուղներից, բացի միայն մի ծառից, որ այգու մէջ տեղն է տընկուած։ Աստուած մեզ մեռնելու վախով արգելել է ուտել այդ ծառի պտղից»։

— «Ի հարկէ դուք չէք մեռնի» ասաց խաբեբան, «Աստուած գիտէ, որ եթէ դուք ուտէք այդ պտղից ձեր աչքերը կբացուեն ու դուք աստուածների նման կլինէք»։

Եւան, գայթակղուելով այդ խօսքերից իր հայեացքը ձգում է այդ գաղտնի պըտղին և ենթարկուելով խաբեբային պոկում է պտուղը ուտում և առաջարկում Ադամին էլ։ Ադամն էլ դէպի կինը ունեցած իր սիրոյ համար ուտում է...և ահա ահռելի փորձանք, անուղղելի սխալ։—Նրանք բոպէապէս կորցնում են իրենց անմեղութիւնը և առաւելութիւնները, Աստուած նրանց գազանների մորթով է ծածկում և երկրային դրախտից քշելով, դուռն մօտ է դնում այրուող սրով զինուած խերուվիմին (հրեշտակ) պահելու դէպի կեանքի ծառը տանող ուղին։

Էզոտերիզմ.—Ադամը ներկայացնում է իրենից ակտիւ սկզբունք—բանականութիւն իսկ Եւան—պասսիւ սկզբունք—սէր։

Ակտիւ սկզբունքը ենթարկուում է պասսիւի զգայացունց և ձգող կողմին, և հրաժարուում այդպիսով իր բանականութիւնից։ Եւ ահա մարդը կենդանութեան է մատնուում և իրեն ծածկող մորթն էլ ներկայանում է այդ ինուոլիւցիայի սիմուոլը։

Իրենց սխալմունքի պատճառով քշուելով աշխարհից կեանքի շրջանից, մարդը կարող է վերադառնալ այնտեղ միայն այն դէպքում, եթէ նրան ճամբայ տայ խերուվիմը, որի այրուող սուրը ճշմարտութեան շանթերը է արձակում, բայց, վերջիններս օգնութեամբ մարդս անկարող է որոշել իր ուղին. նրանք կուրացնում են նրան միայն, լուսաւորելու փոխարէն*)։

Երկրորդ օրինակը մենք առնում ենք բոլորովին այլ շրջանից, որի մէջ սակայն դարձեալ երկու մասերը կան, էկզոտերիկ և էզոտերիկ կողմերը։ Ի նկատի ենք ունենում «Հազար ու մի գիշերը»։

Էկզոտերիզմ.—Պարիզադա արքայադուստրը իմանում է, որ անհաս մի տեղ կայ մի թռչուն, խօսելու շնորհք ստացած, դեղին ջուր, որի մի կաթիլը աւազանի մէջ ընկնելուց դառնում է մի հսկայական խուրձ. գաղտնի ծառ, որից դուրս է գալիս Աստուածային ներդաշնակութիւն և կամենում է այդ հրաշալիքներին տիրանալ։ Նրա երկու եղբայրները, մինը միւսի յետևից փորձում են կատարել նրա ցանկութիւնը, բայց նրանք վտանգաւոր ուղևորութեան ժամանակ մեռնում են։

Արի ու գորովի արքայադուստրը իր հերթին ճամբայ է ընկնում և մարդ դառնալով նա մեծամեծ դժուարութիւններից յետոյ հասնում է սարի փէշերին, որի գլխին գտնուում են թռչունը, դեղին ջուրը և ծառը։ Մի դերվիշը խորհուրդ է տալիս արքայադստերը յետ դառնալ։ «Երբ դուք սարը բարձրանաք, ասում է նա, դուք պիտի լսէք սարսափելի ձայներ, նրանք, պիտի վախեցնեն ձեզ, ձեզ սպառնալու են և եթէ դուք դժբախտաբար յետ նայէք այն ժամանակ պիտի իսկոյն դառնաք սև քար, այս սարը ծածկողների պէս»։ Արքայադուստրը ոչինչ չէ կամենում լսել և բարձրանում է սարն ի վեր, այդ րոպէին լսուում են սպառնալի ձայներ, բայց նա նրանց չի լսում և շատ դժուարութիւններից յետոյ նա հասնում է իր տենչածին։

Իր եղբայրներին գտնելու նպատակով նա հարցնում է թռչունին. «Ջուր վերցրէք,—ասում թռչունը,—և ամեն մի քարի վրայ շաղ տուէք»։ Այդպէս էլ անուս է նա և կեանք

*) Այստեղ ի նկատի է առնուած թանկագին գիտութիւնը և նրա տնաւոր գաղտնիքները։

է տալիս նրանց, որոնք քնել են դարերով.

Էզոտերիզմ.—Արքայադուստրը մարդ է դառնում, սպասի վճռէ իրեն նպատակ դրած խնդիրը։ Մարդուս զգայական խնդիրը։

Մարդուս զգայական կամ վերացական սկզբունքը դառնում է դրական կամ ակտիվ մագիական գործը կատարելու համար։ Դերվիշը պատկերացնում է խոհեմութիւն և խելացիութիւն, որ ցուցնում է վտանգների բնոյթը, որոնցից պիտի խուսափել և անհրաժեշտաբար տիրել ինքզինքը։ Ձայները —սկեպտիկների ծաղրերն են և սուտ գիտնականների, յիմարների, թշնամիների սպառնալիքները, յիմար խորհուրդներ և այլն։

Սև քարերը ներկայացնում են այն մարդկանց ինտելլեկտուալ դրութիւնը, որոնք լոյսը նախանձելով, իրենց արիութեան պակասութեան պատճառով, նորից մթի մէջ են խորտակւում։ Դրա հետ միաժամանակ նրանք այլաբանօրէն պատկերացնում են այն անխոհեմ պատիժը, որ ցանկանում է կատարել մի մեծ գործ, չ՚ոչնչացնելով նախապէս իւր զգայական կողմը, այդ դէպքում սև քարերը անմտութեամբ կամ ուժով սպառնումի խորհրդանշանն են։

Խօսող թռչունը—կենդանի բնութիւնն է, որ բաց է անում իր գաղտնիքները.—երգող ծառը—բուսական աշխարհը, որ բաց է անում իր ներդաշնակութիւնը։ Դեղին ջուրը—նիւթը և դինամիացրած մասունքը։ Նիւթը, լեցրած կենսական ուժով։ Ջուրը, որ արքայադուստրը շաղ է տալիս սև քարերի վրայ, որ կեանք տայ նրանց, ինտելլեկտուալ և ֆիզիքական վերածնութեան խորհրդանշանն է, որ կատարում է նիւրեալը։

Վերջացնում ենք այս օրինակները Եգիպտական սիմուլիկ սֆինքսը վերլուծելով։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՍՖԻՆՔՍԸ

Էկզոտերիզմ.—Կենդանի է մարդկային գլխով, կանացի կրծքով, եզան կողքերով, առիւծի չանկերով և արծւի թևերով*)։

*) Գիզէի պիրամիդայից Հարաւ արևմուտքում գտնւած սիմուլիկ կենդանիներից ամենամեծն է. բարձրութիւնը 75 ոտնաչափ երկար. մօտ 120 ոտն. նա շինւած է, ինչպէս և մեծ պիրամիդաները, մօտ 6000 տարի առաջ։

Էզոտերիզմ.—Մարդկային գլուխը նշանակում է բանականութիւն և գիտութիւն։ Առիւծի չանկերը—համարձակութիւն և գործունէութիւն։ Եզան կողքերը—վստահութիւն, կամք, աշխատանք։ Ծալած թևերը—լռութիւն։

ԻՄԱՆԱԼ, ԿԱՐՈՂԱՆԱԼ, ԿԱՄԵՆԱԼ, ԼՌԵԼ։

Սֆինքսը, չորս մասերից մի ամբողջութիւն կազմելով, նոյնպէս և սուբստանցիայի չորս տարրական ձևերի միաւոր-խորհրդանշանն է.

ԿՐԱԿ, ՋՈՒՐ, ՀՈՂ, ՕԴ։

Կրակը—առիւծի ճանկերով։ Ջուրը—կանացի կրծքով, Հողը—եզան կողքերով, Օդը —արծւի թևերով։ «Աւելին, Սֆինքսը պատկերացնում է իրենից աստրալ աշխարհը և նրա յատկութիւնները։

Գիտութեան բանալին ասես կորսւած է և բոլոր ուսուցմունքը, որոնց մէջ միայն էկզոտերիկ կողմն է, յանձնւած է սրբապիղծներին. ֆրանկ-մասօնները չեն հասկանում այլևս իրենց սիմուլները. գնոստիկները «գնոզաների» դատապարտութիւն առաջ բերին—և այդպիսով ճշմարտութեան ուղին փակւեց։

Միմիայն էզոտերիկ ուսմունքն է տանում դէպի ճշմարտութիւն և երբ ճշմարտութիւնը տարածւի և հասկացւի, նոր ժամանակ (էրա) կգայ աշխարհի համար։

Այժմ մարդիկ ապրում են իւրաքանչիւրը իր համար և նրանց եսականութիւնը երեւան է գալիս նրանց բոլոր դատողութիւններում։

Մէկը կասի, ինձ հարկաւոր է միայն, որ իմ գործերը գնած ինչպէս հարկն է։ Ես ինձ լաւ եմ պահում, ոչ ոքի վնաս չեմ հասցնում երբեք, իսկ մնացեալի հետ ես գործ չունեմ։

Մի ուրիշը ձեզ կյայտնի, թէ նա չի հաւատում մագիային, որ նա ծիծաղում է բոլոր այդ մեքենաների (sic!) վրայ որ այդ բոլոր նրան չին տանի դէպ Աստուածացումը... Վերջապէս երրորդը կասէ, թէ օգուտ միայն կարելի է ստանալ պաշտօնական գիտութիւնից և նրա կարծիքով, ընդհանրապէս Պաստերի գործը աւելի լուրջ նշանակութիւն ունի, քան ամեն մի հետա-

զօտութիւն Հնդկաստանի, Եգիպտոսի և Խալդիայի մասին։

Հրաշալի է, և դուք ձեր խօսքերը խելացի էք համարում և արտասանելով այն գոհանում էք, ասես մի հանճարեղ բան լինէք ասած։

Դուք, որ ձեզ լաւ բնաւորութեան տէր էք յայտարարում... Ի՞նչ պիտի անէք, երբ ձեզ ճնշեն հարկերով։ Արդեօք, չէ՞ք սկսի անբարոյականութեամբ ձեր բարեկեցութիւնը պահպանել, կամ դուք անպատիւ կլինէք և ձեր առևտուրը կծաղկի, կամ դուք պատուաւոր կմնաք և ձեր գործերը կը երերան։

Իսկ դուք, որ չէք հաւատում մագիային և ծիծաղում էք «այդ մեքենաների» վրայ, ինչպէս դուք էք ասում... Մենք կասենք, որ դուք անմտացածին էք խօսում, չէք հաւատում նրա համար, որ չգիտէք և խօսքերը արծարծում էք միայն նրա համար, որ ծածկէք ձեր անքաղաքավարութիւնը։

Մի՞թէ չի կարելի, երաժեշտ չլինել, բայց հաւատալ երաժշտութեան։ Մի՞թէ չի կարելի նկարիչ չլինել, բայց հաւատալ նկարչութեան։ Օ՜, կրացականչէք, բայց չէ՞ որ երաժշտութիւնը կարելի է լսել, նկարները տեսնել։ Բայց մի՞թէ մագիան չի կարելի տեսնել ստեղծագործութեան բոլոր հրաշքներում...

Մի՞թէ դուք երբէք չէ՞ք դիտել պարզ գիշերին երկնքի անսահման ընդարձակութիւնը։ Դուք երբէ՞ք, մի՞թէ, չէք մտածել, որ բոլոր այդ լուսեղէն կէտերը, որոնցից մենք բաժանուած ենք անվերջ տարածութիւնով, արևներ են, որոնք լուսաւորում են մեզ, անյայտ երկրներ։ Ո՞ր այդ երկրներում նոյնպէս, ինչպէս մեզ մօտ, ստեղծւածներ են ապրում, որոնք, ինչպէս և մենք, սիրում են, ստեղծում են իրենց նմաններին և մեռնում։ Ո՞ր այդ երկնային բոլոր մարմինները, գոհարներն են, թանկագին քարեր, որոնք պահում են այն ուժով, որին գիտութիւնը ծգողութիւն է անուանել, գլորում են անվերջ իրենց շուրջը, երբէք չծուելով այն ճամբից, որ գծել է նրանց համար բաղդը։ Տիեզերքի մագիան չէ՞ արդեօք դա։

Այո, բարեկամ, դուք հէնց ինքներդ ամեն օր մագիայով էք զբաղւում։ Նա երեւան է գալիս ձեր խօսքերում, ձեր ժեստերի մէջ, ձեր գործունէութեան մ[illegible]

Վերջին անգամ, ձեր բժշկի [illegible] վիճելիս հէնց դուք հաստատել էք, որ միայն վախն է խօլերա առաջացնում և, որ նա նրանց [illegible] միայն բեկում, որոնք նրանից վախենում են։

Այդպիսով, դուք թոյլ էք տալիս, որ վախը կարող է ծնել հիւանդութիւն, այսինքն ուրիշ խօսքով, վախը ընդունում է մի որոշ ձև և այդ ձևն էլ բեկանում է։

Բայց դա էլ հէնց տրանսցէնդենտալ մագիան է, ներշնչում, (эвольтованіе)։

Հետևապէս այդ դէպքում նոյնպէս դուք գործ ունէք մագիայի հետ, միայն առանց հաշիւ տալու ձեզ։ Իսկ ինչ վերաբերում է ձեզ, որ օկտակար էք համարում պաշտօնական գիտութիւնը, թոյլ տուէք նկատել, որ ձեր առողջ միտքը թերի է։

Անկասկած մեր դարի գիւտերը հրաշալի են, զարմանալի, բայց բաւական է արդեօք այդ։

Ինչի՞ են պէտք նրանք, երբ վաղը թշնամական յարձակումը և տեղական վայրենութիւնը ձեր երկիրը ծխող աւերակ են դարձնելու—«Այն, ինչ որ դուք ասում էք, անկարելի բան է, մենք քաղաքակրթւած ենք, մենք զօրք ունենք!—Բաւական է, ձեր խօսքերով դուք միայն խիղճ էք զարթեցնում, դուք ձեզ համարում էք քաղաքակիրթ բայց, իմիջի այլոց, երբէք բարոյականութիւնը այնքան ցած չի եղել կանգնած, որքան այժմ։ Մի՞թէ մոռացել էք Պանամական գարշելիութիւնները, Ռաւաշոլի ռումբները և Կազերիոյի*) դաշոյնը!!!

Ձեր զօրքը։ Չխօսենք նրա մասին։ Նայեցէք աշխարհագրական քարտէզի վրայ Ֆրանսիայի բռնած տարածութեանը և համեմատեցէք ամբողջ Եւրոպայի հետ, իսկ վերջինս էլ մնացած աշխարհի հետ, և դուք կըտեսնէք թէ ի՞նչ է ներկայացնում իրենից ձեր զօրքը...

---

*) Հաւանական է այն կարծիքը, թէ Կազերիոն Իտալացի էր. մեզ համար շատ պարզ է յամենայն դէպս, որ Կազերիոն պասիւ գործիք էր, ինչպէս Ժակկլեմանը և Ռաւալեակը և, որ նրանք, որոնք դրդել են այդ ոճիրը անելու կարող է պատահել Իտալացի էլ չլինին եղած։

Եթէ դուք ծանօթանաք այն պատմութեան հետ, որին դուք հերքում էք, և որից գերազանց էք Պաստերի գործերը, այն ատեն, ինչքան էլ նրանք օգտակար չլինին, դուք կիմանաք, որ մօտ 6000 տարի առաջ Եգիպոսը ծաղկած էր այնպէս, ինչպէս երբէք չի ծաղկել Ֆրանսիան։

Ֆիվերը *) իրենց մէջ ունէին այնպիսի հրաշալիքներ, որոնց առաջ մերը երեխայական խաղալիքներ կերևան։ Գրականութիւնը գիտութիւնները, գեղարուեստը հասցրուած էին կատարելագործման ամենաբարձր աստիճանին կրօն**), մօրալը, օկկուլտիզմը ժողովրդի կրթութեան անհերքելի հիմքերն էին կազմում։

Ուժեղ ու արի զինուորներից բաղկացած անթիւ զօրքը իշխում էր միւս աշխարհների վրայ։

Ոսկով, արծաթով և թանկագին քարերով հարուստ տաճարները, պալատները, պիրամիդաները, որոնց մեծութիւնը վախեցնում է այժմ իսկ զարմացած ճանապարհորդի հայեացքը, պատմում են այդ երկրի առատ հարստութեան մասին։

Եթէ դուք ասէիք այն ժամանակուայ եգիպտացուն, թէ նրա երկիրը պիտի անապատ դառնայ, նա ձեզ խելագարի տեղ կնդունէր, բայց այժմ ի՞նչ է պատահել։ Էզոտերիզմը տեղի է տեղի է տալ էկզոտերիզմին. կրօնը վերափոխուել, ճշմարիտ Աստուածապաշտութեանը փոխարինել է կռապաշտութիւնը, իսկ նախապաշարմունքը մագիայի տեղն է բռնել. բարոյական սանձարձակութիւնը շուտով հրապուրել է իր ետևից հասարակութեան անկարգութիւններ և փարաւօնները դողացել են գահերի վրայ։

*) Ներկայումս Ֆիվի ընդարձակ աւերակների վրայ ընկած են Մեդինէ-Աբու, Կարնակ և Լուկսոր գիւղերը։

**) Եգիպտացիները երբէք չեն աստուածացրել կատուներին, արևին, լուսնին և այլն, ինչպէս ասում են ստելով շատ պատմաբաններ, բայց նրանք երկրպագում էին էին միակ Աստծուն նրա սիմվոլիկ յատկանիշներով։ (Դրա մասին տես Էրնէստ Բոսկի «L Egyptologie sacree» հետաքրքիր ուսումնասիրութիւնը)։

Այդ մօմենտից օգուտ քաղելով Թշնամին շարժուել է դէպի Եգիպտոս և Եգիպտոսը ընկել է արեան և կրակի մէջ։

Ի՞նչ է մնացել այժմ այդ անմէկին քաղաքակրթութիւնից.

ԱՒԵՐԱԿՆԵՐ ԵՒ ԱՒԱԶ...

Այսպէս է ժողովրդի պատմութիւնը, պատմութիւն, որ կարող է և մերը նոյնպէս դառնալ, եթէ չփնտրենք ճշմարտութիւնը այնտեղ, ուր հարկն է, եթէ մենք չբացենք նրան փայլուն մերկութեան մէջ։

Մագիայի բանական ուսմունքը մեզ կարող է մօտեցնել ճշմարիտ բարոյականութեան, ստիպելով դիպչել անտեսանելի շերջանին և հաստատելով, որ մարդը հասարակ մեքենայ չէ ինչպէս ինքն է համարում, որ մահը—ոչ թէ մարդուս ոչնչացումն է այլ նրա ապագայ էւոլիւցիայի գաղտնիքը... իսկ բարոյականութիւնը ազգերի իսկական ոյժն է։

Թարգման. Հ. Ա.

Շնորհակալութեամբ ստացուած են՝

1) «Ղարադաղ», երկշաբաթաթերթ, Թաւրիզ №№11,12 1915 թ.

2) „Ճառագայթ» ժողովածու I գ. էջ 32 գինը 10 կոպ. 1914 թ. Թիֆլիս

3 Նոյն II գ. էջ 32 գինը 10 կոպ.1915 թ

4) Կարա-Դարուիշ «Ինչ է ֆութուրիզմը» էջ 64 գինը 15 կոպ. 1914 թ. Թիֆլիս

5) Ե. Օհանեան (Գիժ) «Թուցիկ վերքուն փքուն խօսքեր». էջ 98 գինը 20 կոպ 1914 թ. Թիֆլիս.

6) Կարա-Դարուիշ «Շրեշ բլուր» ֆութուրիստական պօէմա, գինը 05 կոպ. Թիֆլիս

7)Հր. Համբարեանի «Տարաբախտ ուսանողը» հր. Մ. Վարժապետեան. էջ 86 գինը 3 ղրշ. 1912 թ. Մարզուան.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм.ССР
Ս. ԱՄ. Ա. Մասեռեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕԳՏԻԵՑԻՔ ԱՌԻՓԻՑ ՁԵՌՔ ՌԵՐԵԼՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՐԵՐ ԶԵԱՆԻ ՀԻՊՆՈՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՄՏՔԻ ՔԱՂԱՔՈՒԹԻՒՆ, ԳՈՐԾՆԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՐՍԵՐԸ։

Շատերը այս կուրսերը համարում են մի յետադէմ, մութ մտքի արդիւնք, և ակնարկում Ամերիկեան կուրսերի առաւելութիւնները. առաջ ենք բերում բովանդակութիւնը, գաղափար տալու համար.

Յառաջաբան.- Գաւմական ակնարկ.- Մտքի երկւորութիւնը Ներշնչումն.- Ինչպէս ներշնչել.- Ֆիզիքական փորձեր (մոռանալ տալ ենթակային իր սեփական անունը, կարծրացնել թևը ներշնչումով և այլն).- ՀԻՊՆՈՏԻԶՄ.- Հիպնոսացնելու մեթոդներ (մօտ 25 մեթոդ).- Պասսեր.- Հիպնոսական քունի աստիճանները.- Բնականը փոխել հիպնոսական քունի.- Հիպնոսացումն նամակով, հեռախօսով և այլն.—Արթնցնելը.—Հալլիւսինացիա.—Անզգայացումն (Anaesthesia).—Ինքնաներշնչում.—Ինքնահիպնոսական դարմանումն.—Ճանաչել մի լաւ ենթակայի.—Ինչպէս կառավարել երեխաներին և զարգացնել նրանց մտաւոր կարողութիւնները.- Հոգեբուժութիւն.— Ներվային կենտրոններ.— Ընդհանուր դարմանումն.— Ինչպէս արեան շրջանառութիւնը հաւասարեցնել,- Բժշկել զանազան հիւանդութիւններ ներշնչումով, մտադրութեամբ և այլն.— Ներալգիա.— Ականջների և առամների ցաւ.— Գլխացաւ.— Վէրքեր. — Կոյր աղիքի բորբոքումն.— Աչքի անհաւասար տեսութիւն.— Աչքի բորբոքումն.— Մաղձային. — Միջապարկի հիւանդութիւններ.— Շնչափողերի բորբոքումն.— Ստամոքսի կատարը.— Ցրտառութիւններ. — Փորկապութիւն.— Փորլուծութիւն.— Դեզինտերի.— Ներվայնութիւն.— Հօնորրէյ (մայասրլ).— Մէջքի ցաւ.— Էկզիմա.— Անկոզնում միզել.— Տենդ, Ջերմ.— Ջերմ մալարիա. Ջերմ, մաղձային.— Ռեմաթիզմ.— Ազդերային ռեմաթիզմ.— Անդամալուծութիւն.— Միլամաղձոտութիւն և այլն և այլն.։— Մտաւոր Դարմանումն.— Պայծառատեսութիւն (դանել գողացածը, լուրեր իմանալ).— Տելեպաթիա.— Աէանսներ.— Նոր Հոգեբանութիւն կամ ներ մտաւոր կարողութիւնները և նրանց գործածելու կերպը.— և շատ ուրիշ սորբաժանումներ...

Բոլոր բացատրութիւնների համար դիմել հայերէն՝ Тифлисъ, Вельяминовская ул. № 22 г-жѣ Сусаннѣ Шекерджіанъ.

«ՀՈՐԻԶՈՆ»—օրաթերթ (8-տարի), Տարեկան Ռուսաստանում.—10 ռուբ. 1/2 տարին 6 ռ. ամսական 1 ռուբ.։ Արտասահման.—Տարին 12 ռուբ. կէս տարին 7 ռուբլի հասցէն՝ Тифлисъ, Сололакская ул. ред. «Оризонъ»

«ՄՇԱԿ»—օրաթերթ (45-տարի) տարեկան 10 ռուբ. կէս տարին 6 ռ. ամիսը 85 կ.։ Հասցէն՝ Тифлисъ, рндакція «Мшакъ»։

«ԱՐԵՒ»—օրաթերթ (3-տարի) տարեկան 8 ռ. կէս տարին 4 ռ. 50 կ. ամիսը 1 ռ.։ Հասցէն՝ Баку, Б-Марская ул. № 30 «Аревъ»

ԳԱՂՈՒԹ շաբաթաթերթ. տարին 5ռ. կէս տ. 2ռ. 50 կոպ. ամիսը 50 կոպ. հասցէն՝ Ростовъ н/Д. Старо-Почтовая ул. № 128, ред. „Гагутъ"

ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ Թատերական երաժշտական ամսաթերթ. տարին 3 ռ. արտասահման 4 ռ.։ հասցէն՝ Баку, ул. Гоголя № 22 А. Маиляну для журнала.

„Армянскій Вѣстникъ»— еженедѣльный журналъ, подписка съ января 1916 г. на 1 г. 5 р. на 6 м. 3 р. на 1 м. 75 коп. адресъ: Москва, Остоженка, 2-й Ильинскій пер. 3 ред. «Арм. вѣстникъ»

Հայկական ՍՍՀ Գիտ. Գրադարան